

**ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ**  
**ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԱՃԱՐԻ, ՔՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՐԲ ԳԵՐՁՄԱՆԻ**  
**ՓԱԿՄԱՆ ԵՒ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ ՄԱՏՈՒՅՈՒՈՂ ՍՈՒՐԲ**  
**ՊԱՏԱՐԱԳՆԵՐՈՒ, ԹԱՓՕՐՆԵՐՈՒ ԵՒ ԱՅԼ ՍՐԲԱԶԱՆ**  
**ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ**

Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանը այսու կը տեղեկացնէ մերազն հաւատացեալ ժողովուրդին, թէ վերջին օրերուն համացանցին մէջ տարածուած տեղեկութիւնները՝ Սուրբ Յարութեան Տաճարի, Քրիստոսի Սուրբ Գերեզմանի փակման, ինչպէս նաեւ Տաճարին մէջ մատուցուող Սուրբ Պատարագներու, թափօրներու եւ այլ սրբազան արարողութիւններու վերաբերեալ, կեղծ լուրեր են:

Ներկայ պատերազմական իրավիճակի սկիզբէն մինչ օրս, Սուրբ Յարութեան Տաճարի հաստատուած Status Quo-ի թելադրութեամբ Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանին վերապահուած բոլոր արարողութիւնները կատարուած են եւ կը շարունակուին առանց ընդհատման: Բացառութիւն կը կազմեն Մեծ Պահոց շրջանին յատուկ որոշ արարողութիւններ, որոնք կը կատարուին դռնփակ՝ անվտանգութեան նկատառումներով, փոքրաթիւ միաբաններու մասնակցութեամբ:

Անվտանգութեան պահպանման ներկայ իրավիճակին տեսողութիւնը տակաւին անորոշ է, եւ առայժմ անկարելի է ճշդել Աւագ Շաբթուայ եւ Զատիկական տօներու արարողութիւններու վերջնական ժամանակացոյցը:

Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանը մշտապէս հաղորդակցութեան մէջ է Սուրբ Յարութեան Տաճարի միւս երկու իրաւատէրերուն, ինչպէս նաեւ համապատասխան պետական մարմիններուն հետ: Երբ Աւագ Շաբթուայ եւ Զատիկական տօներու արարողութիւններու ժամանակացոյցին վերաբերեալ վերջնական որոշումներ առնուին, Պատրիարքարանը կը ծանուցէ մերազն հաւատացեալներուն եւ աշխարհասփիւռ մեր ժողովուրդին:

Այս դժուարին պայմաններու մէջ, Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը կ'աղօթէ Սուրբ Երիրի խաղաղութեան եւ անդորրութեան վերահաստատման համար:

Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանը քրիստոնէական ամենահին ներկայութիւն է Սուրբ Երկրին մէջ եւ պիտի շարունակէ հաւատարմօրէն իր սրբազան առաքելութիւնը, որ անխափան կը շարունակուի IV դարէն մինչեւ մեր օրերը:

22 Մարտ, 2026

**ԳԻՒԱՆ ՍՈՒՐԲ ԱԹՈՒՈՅ**

**ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ**  
**ԳԱԼՍՏԵԱՆ ԿԻՐԱԿԻՒ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԸ ՆՈՐ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ**  
**ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՆՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ**  
**ՉՄԱՏՈՒՅԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Սուրբ Երկրին մէջ տիրող պատերազմական իրավիճակին եւ ատոր հետեւանքով սահմանուած սահմանափակումներուն, ինչպէս նաեւ Նոր քաղաքի Սուրբ Գրիգոր Լու-

սաւորիչ եկեղեցւոյ յարակից ճանապարհաշինական աշխատանքներուն պատճառով, Մեծ Պահոց Վեցերորդ՝ Գալստեան Կիրակիին առիթով մատուցուելիք Սուրբ Էւ Անմահ Պատարագը, 29 Մարտ, 2026-ին, փոխանակ Նոր քաղաքի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ պիտի մատուցուի Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ:

Սկիզբ Սուրբ Պատարագի՝ ժամը 09:00-ին:

25 Մարտ, 2026

ԴԻԻԱՆ ՍՈՒՐԲ ԱԹՈՒՈՅ

